ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՓԱՐԻԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԺՈՐԺ ՊՈՄՊԻԴՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ, ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Փարիզ

Եղբայրորեն կմասնակցինք ձեր եկեղեցվո ու ժողովուրդի մեծ սուգին և հանուն հայ եկեղեցվո կխնդրենք ընդունիլ Մեր խորազգաց ցավակցությունները ձեր երկրի կրած մեծ կորուստին տխուր առիթով:

Մենք կաղոթենք, որ Տերը հավերժական լույսի աշխարհի մեջ անթառամ պահպանե հիշատակը հանգուցյալ նախագահ Ժորժ Պոմպիդուի, որ արժանավոր մեկ զավակը եղավ ֆրանսական հայրենիքին և մեր ժամանակներու խաղաղասեր մեծագույն պետական մարդոցմե մին:

Թող Աստված իր օրհնության ներքև միշտ ծաղկյալ պահպանե Մեծն Ֆրանսան:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4-ը ապրիլի 1974 թ.,
Ս. Էջմիածին

*
* *

Էջմիածին

Խորապես շնորհակալ եմ և զգացված Ֆրանսիայի հանրապետության նախագահի մահվան առթիվ Ձերդ Սրբության արտահայտած զգացումների համար:

Հոգեհանգստյան արարողության ժամանակ Ֆրանսիայի բոլոր հավատացյալների հետ միասին աղոթեցի, որպեսզի Տերը հոգվո հանգստություն պարգևի մեր Պետության Ղեկավարին:

ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻ
Արքեպիսկոպոս Փարիզի

5-ը ապրիլի 1974 թ.,
Փարիզ